

ԹԵԼԵԹԸ ՀԱՅ ԵՎ ՎՐԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ, ԲԱՆԱԼՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սեյրանգանդ գովելի.

Անուշ է րուպդդ, Թելե՛ր:

ՇԱՄՁԻ-ՄԵԼԻՔՈ



ուրտա՛վ և Թելե՛թ: Այս զույգ տեղանունները հայտնի էին անցյալում իբրև ժողովուրդների բարեկամության, համերաշխության և միասնականության վեհ զաղափարների ծառայող պատմական վայրեր, առաջինը Դ—է դարերից, իսկ երկրորդը Ժ—ժԱ դարերից:

Յուրտավի մասին¹ էր, որ Աբրահամ Ա Աղբաթանեցի Հայոց կաթողիկոսը (607—615) Կյուրիոն Ա Սկուտարցի Վրաց կաթողիկոսին (595—610) գրած թղթում (608 թ.) նշում էր, թե ինչպես «զմիտություն հաւատոյ և զասպնջականութիւն զերկոցունց աշխարհացս Յուրտաւայ եկեղեցին անշարժ միջնորդութեամբ պահէր. ուստի սէր և խնամութիւնը մարմնաւորականք և հաղորդութիւնք հոգեւորականք կատարէին ցնծալից ուրախութեամբ»²:

¹ Յուրտավի տեղագրության մասին տե՛ս մեր աշխատությունները. 1. «Յուրտավի տեղագրության հարցի շուրջը». «Ռուսական աշխարհագրական բնկերության Կովկասյան բաժանմունքի Տեղեկագիր», ԻԿ, № 3, Թիֆլիս, 1916, էջ 341—345 (ռուսերեն). 2. Թոփալեթ-Մալկայի նյութական կուլտուրայի մնացորդների և տեղանունների ուսումնասիրության շուրջը», Ժողովածո՝ նվիրված Ն. Մառին, հրատարակություն Թրիլիսի պետական համալսարանի, Թրիլիսի, 1934, էջ 38—44 (վրացերեն). 3. «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», Ա, Երևան, 1934, էջ 12—15, ծանոթ. 6:

² «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 164. նույնը՝ Ուխտանէս Խլիսկոյան, «Պատմութիւն րաժանման վրաց ի Հայոց», Վաղարշապատ, 1871, էջ 74:

Ապա Կյուրիոն կաթողիկոսն իր պատասխան նամակում (նույնպես գրված 608 թ.) ընդգծում էր, որ «վասն հոգևոր հաղորդութեան և մարմնաւոր սիրոյ եկեղեցին Յուրտաւայ հաստատեալ էր ի մէջ երկուց աշխարհացս»³: Սրան միանգամայն համամիտ էր Աբրահամ Ա Աղբաթանեցին, երբ իր ընդարձակ «շրջագայական թղթում» (608—609) հաշտվում էր այն մտքի հետ, որ «եպիսկոպոսն եկեղեցւոյն Յուրտաւայ... զմիջնորդութիւն ունէր երկուց աշխարհացս»⁴:

Յուրտավի հիշատակությունը է՛ դարից հետո իսպառ անհետանում է պատմության ասպարեզից, և մի քանի դար անց նրա տեղը ազգամիջյան փոխհարաբերությունների բնագավառում կարծես թե ստանձնում է Թելեթը:



Թելեթի մասին Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցը գրում է. «Թելեթ է գիւղ Հայոց և Վրաց հուպ ի քաղաքն Տփլիս ի կողմն հարաւոյ, շինեալ ի գառ ի վայր տեղւոջ ի միում ձորակի ի թիկանց Կոճոռոյ լերին: Աստ է հուշակաւոր մատուռն Սրբոյն Գէորգայ. միջակ է շինուածն, սաղաշէն և աղիւսակերտ, բայց խրթին ամենեկին և անշուր. սակաւ ինչ բացեալ յիւրմէ ունի զսնգակատուն վայելչացեալ շքեղ կաթողիկէիւ»⁵:

³ «Գիրք թղթոց», էջ 166. Ուխտանէս, էջ 76:

⁴ «Գիրք թղթոց», էջ 194. Ուխտանէս, էջ 136:

⁵ «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, աշխատասիրութեամբ տեառն Սարգսի Սաւաննեցւոյ Ջալալեանց թեմակալ արքեպիսկոպոսի հայոց Վրաստանի և Իմերեթի և այլոց», մասն Բ, Տփլիս, 1858, էջ 74:

Միաժամանակ Զալալյանցը կարևոր էր համարում շեշտել, որ «ուխտատեղիս այս» նախ քան գերեսուն ամիս (այսինքն՝ 1826 թ. — Լ. Մ.—Ք.) չէր նշանաւոր, միայն սակաւք ոմանք դիմէին անդ յուխտադրութիւն. սակայն ի 1826 ամի կաթողիկոսն Ամենայն Հայոց Ներսէս ի ժամանակս իւրոյ առաջնորդութեան [Վրաստանի և Իմերեթի] կարգեաց անդ վանահայր զԳէորգ քահանայն Մեհրաբեանց ուխտս այս և հռչակ հարկանել ամենայն ուրեք»⁶:

Բացի այս ամենից, նշված էր նաև այն, որ «տօնախմբութիւն ուխտիս կատարի ի տօնի հրաշափառ Համբարձման Քրիստոսի»:

Այս Զալալյանցը թեև մի առ մի հիշատակում է Թեւեթում 1826 թվականից հետո ձեռնարկված կառուցումները, սակայն, զրգարատարբար, չի ծանրանում այն հարցի վրա, որը ներկայումս մեզ ավելի է հետաքրքրում, թե ի՞նչ էր ներկայացնում այդ ուխտատեղին մինչ 1826 թվականը, որքա՞ն էին էին մինչ այդ ժամանակ տեղում եղած շենքերը, ի՞նչ վիճակի մեջ էին երանգ իրեն պատմական հուշարձաններ և այլն:

Մյուս կողմից, բավականին արժեքավոր է Զալալյանցի այն ցուցմունքը, թե ինչպես ներսես Աշտարակեցու օրոք կայացավ որոշում գործադրելու «որպէս եկամուտ այսր վանաց, նոցնպէս և ամենայն ուխտատեղեաց Վրաստանի, ի պէտս պահպանութեան հոգեւոր զպրոցիւն Տփլիսայ»⁸:

Այստեղ խոսքը վերաբերում է Ներսես Աշտարակեցու կողմից Թիֆլիսում հիմնված հայոց ազգային դպրոցին (1824 թ.), որը 1836 թվականի 11 մարտի «Պոլոժենիե»-ի ուժով վերածվեց թեմական սեմինարիայի, կոչվելով «Ներսիսյան հոգևոր դպրոց»: Վերջինիս, ինչպես և բոլոր մյուս ազգային դպրոցների գոյությունը, ըստ «Պոլոժենիե»-ի, ապահովված էր Հայոց Եկեղեցու նյութական միջոցներով, որպիսիք հիմնականում կազմում էին եկեղեցական անշարժ գույքից՝ կալվածներից ստացվող եկամուտները: Իսկ այսպիսի դպրոցապատկան կալվածները (տներ, խանութներ, ջրաղացներ, այգիներ և այլն) մասնավորապես կենտրոնացած էին Թիֆլիսում, որոնց ցուցակը դեռևս ժՐ դարում կազմել էր Սիմեոն կաթողիկոս Երևանցին իր «Համարո»-ում⁹:

6 Սարգիս արքեպիսկոպոս Զալալյանց, հիշյալ աշխատությունը, էջ 74:

7 Նույն տեղում:

8 Նույն տեղում, էջ 75—76 (ստորագծումները, այստեղ և ստորև ամենուրեք, մերն են—Լ. Մ.—Ք.):

9 «Համարո, համառոտվեցեալ և շարադրեցեալ ի Սիմեոն կաթողիկոսի Նուրադեանց», Վաղարշապատ, 1873, էջ 207—209:

Սակայն մի կետում Զալալյանցը մեղանշում է: Նա չի հասկացել ժՐ դարի հայ պատմագիր Զաքարիա սարկավազ Հովհաննավանեցու (ծագումով վրացի) վկայությունը («Պատմագրութիւն», Գ, գլ. ԺԶ), որը վերաբերում է Գևորգ զորավարի նշխարների փոխադրմանը Հայաստանից Վրաստան, այսինքն Մուղնի գյուղից «ի Տփլիս» և ապա Տփլիսից «Երկիրն Կածարեթոյ, որ այժմ ասի Զխար»¹⁰: Զալալյանցը բնագրի Կածարեթը շփոթել է Թեւեթի հետ, ըստ երևույթի երկու տեղանուններում առկա եր վերջածանցի հետևանքով: Ուստի և, մեր կարծիքով, Թեւեթին նվիրված տեսության մեջ Զաքարիա սարկավազի վկայությունը անտեղի է օգտագործված Զալալյանցի կողմից¹¹, լոկ թյուրիմացության արդյունք է և շփոթություն առաջացնող պարագայ:

Ավելորդ էր լինի նաև նշել, որ, ըստ Աղեքսանդր Երիցյանի, «աստիճանավոր Ստեփան Ղամբարյանը» Ներսիսյան դպրոցին ընծայել էր մի «փոքրիկ այգի Թեւեթ գյուղում»¹²:



Վրաստանում, հատկապես Արևելյան Վրաստանում, այսինքն Քարթլիում և Կախեթում, կան մի քանի վայրեր, որոնց անունները ծագել են «թելա» բառից, որը նշանակում է ծփի, կեծնի և որին համապատասխանում են ռուսերեն «վյազ»-ը և լատիներեն «ուլմուս»-ը¹³: Ահա այս բառից է, որ

¹⁰ Զաքարիա սարկավազ, «Պատմագրութիւն», Վաղարշապատ, 1870, Գ, էջ 38—40, մասնավորապես 40. նույնը տեղադր. Մ. Բրեսկի ֆրանսերեն թարգմանության մեջ («Կուլեկսիոն դ'իստորիեն դ'արմենիեն», Բ, ՍՊՐ, 1876, էջ 184—186):

¹¹ Սարգիս արքեպիսկոպոս Զալալյանց, հիշյալ աշխատությունը, էջ 75: Ամենայն կասկածից դուրս է, որ Զալալյանցի դատողությունը Զաքարիայի վկայության շուրջը հիմնված է վերջինիս «Պատմագրութիւն» աշխատության որևէ ձեռագիր օրինակի վրա, քանի որ 1858 թվականին այն, ինչպես և նրա ֆրանսերեն թարգմանությունը դեռ հրատարակված չէին:

¹² Աղ. Երիցյանց, «Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, որ ի Թիֆլիս» (1824—1899)», Ա. Թիֆլիս, 1898, էջ 63:

¹³ Տե՛ս մեր կազմած համեմատական ծառագիտական բառարանը պրոֆ. Ս. Քուրդիանիի գրքում՝ «Ծագագիտություն», Թիֆլիսի, 1934, էջ 470 (ռուսերեն): Ըստ իս, «Թելեթ» անվան հետ ո՛չ մի կապ չունի Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» մեջ (բ. տպ., Վաղարշապատ, 1898, էջ 186) հիշատակված «Թելեթիս»-ը, իբրև բերդ «ի գաւառին Թլմոյ», որը Լ. Մ. Զալալյանի մոտ («Պատմութիւն Հայոց», Բ, 1895, էջ 990) «Թելեթիս»-ի է վերածվել:

այլևայլ ածանցավորումով (օրինակ -եք, -ավ, -ավան, -աք) գոյացել են մի շարք տեղանուններ նույն Արևելյան Վրաստանի սահմաններում, նույնիսկ նրանից դուրս. այդպիսիք են.

ա. «Թելեթի», «Թելեթ» (հմտ. «Սոմ-խեթ», «Կախեթ», «Խմբեթ» և այլն), հոգնակիում «Թելեթերի», այսինքն «Թելեթներ»։ Այստեղից են «Թելեթի սար», «Թելեթի լյառն», «Թելեթի լեռնաշարք», «Թելեթի ձորակ», այլև «Խատիս-Թելեթի» (այսինքն «Ուխտատեղիի Թելեթ»), «Բուրդիս-Թելեթի», «Մուրդուս-Թելեթի», «Միրզոլանի Թելեթի» և այլ տեղանունները¹⁴։ Սրանք բոլորը գտնվում են Թբիլիսիից դեպի հարավ, այսպես կոչված Թելեթի կամ Սոդանլուղի լեռնաշղթայից այն կողմ։

Պարզապես «Թելեթի» հորոքորումով հայտնի է նաև Կախեթի վաղեմի մայրաքաղաք Ճերեմիի ԺԱ դարի առաջին կեսում կառուցված եկեղեցիներից մեկը, որի հիմքում ամփոփված վիմագրության մեջ հիշվում է Մցխեթայի կաթողիկոսանիստ Մայր Տաճարի կառուցող Մելքիսեդեկ Ա վրաց կաթողիկոսի (1012—1030, 1039—1045) անունը¹⁵։

բ. «Թելավի», «Թելավ» (հմտ. նույն ձևով կազմված տեղանունները՝ Պարտավ, Տուրտավ, Մանավի, Ջանավի և այլն), այն է Կախեթի թագավորության Ժէ—ԺԸ դարերի մայրաքաղաքի անունը։

գ. «Թելուանի» (հմտ. նույն ձևով կազմված Մերուանի, Վաշլուանի և այլն), գյուղ Թբիլիսիի շրջակայքում։

դ. «Թելաթ-գորա»՝ լեռան և գյուղի անուն նույնպես Թբիլիսիի մոտ։

Սրանցից Թելեթը մի փոքր հիշեցնում է Աղվանից աշխարհի «Ճալեթ»-ը (համեմայն դեպս, ավելի, քան «Կածարեթ»-ը)։ Սակայն սրա մասին ստորև։

Ուշագրավ է, ի միջի այլոց, նաև այն, որ Դ դարի երկրորդ կեսի հոռոմական քարտե-

զում, որը հայտնի է գիտության մեջ «Պետինգերյան տարուլա» հորոքորումով, հիշված են «Տելեդա» և «Փիլադա» տեղանունները¹⁶, և այս տեղանունները մի շարք գիտնականներ նույնացնում են Թելեթի և [Տ]իլիլիսիի¹⁷ (Թբիլիսիի)¹⁸ հետ. հետևապես, նրանք ընդունում են Թելեթի և Թբիլիսիի, իբրև աշխարհագրական վայրերի, գոյությունը Դ դարում Քրիստոսից հետո։

Վրացական վավերագրերում և առհասարակ նորմատիվ գրավոր հուշարձաններում Թելեթը բազմիցս հիշված է Ժէ դարի սկզբներից։

Այսպես, օրինակ, 1606 և 1697 թվականների սիգելներում հիշված են «Թելեթերի», այսինքն «Թելեթները», իբրև Կրծանիսի արվարձանի սահմանակից (հայնկույս) վայրեր¹⁹։

1721 թվականի մի վավերագրում Թելեթը հանդես է գալիս իբրև սեփականություն երկու կալվածատերերի՝ Մուխրանի Բատունիի (տիրոջ) և իշխան Ամիրխավարիի (Ամիրխորիի)²⁰։

1748 թվականին Հերակլ (Էրեկլե) Բ արքան իշխան Ավթանդիլ Ջավախիշվիլուն հասցեագրված հրովարտական Թելեթը գիշում է ոմն Աբդուլբեգին²¹։

1755 թվականի վավերագրում Թելեթը նորից հիշվում է իբրև սահմանակից Կրծանիսիի²²։

16 Կ. Միլլեր. «Թիններարիա Ռոմանա» Ետնադարձ, 1916 (գերմաներեն), քարտեզը։

17 Հմտ. նմանօրինակ երևույթները հայերենում. Կտեղեֆոն—Տիգրոն, Նիգիրին—Մծրին, Նկատերինա—Կատարինե, Նվիրոսինա—Հուրիսինե, Նվստաթեոս—Տաթև և այլն։

18 Ժ. Մառկվարտի հոգվածը «Ակիզգն ցուր հիստորիչն Տոպոգրաֆի» և այլն, «Հանդես ամսօրյա», 1927 թ., № 11—12, էջ 830, 860—«Մոնումենտալ արմենոլոգիկա», Վիեննա, 1928, էջ 111, 126 (գերմաներեն). Հ. Մանանդյան, «Հայաստանի առևտրի և քաղաքների մասին», Բ հրատ., Երևան, 1954, էջ 166—167 (ռուսերեն). Ն. Լոմոսովի, «Թբիլիսիի մասին հնագույն օտարալեզու վկայությունը», հոբելյանական ժողովածու «Թբիլիսի—1500», Թբիլիսիի պետական համալսարանի հրատարակություն, Թբիլիսի, 1958, էջ 27 (վրացերեն)։

19 Յառնե Լորբիփաճին, «Մտորին Քարթլին ԺԸ դարի առաջին քառակույս», Ա—Բ, Թբիլիսի, 1935, էջ 313, Գ—Դ, Թբիլիսի, 1938, էջ 387 (վրացերեն)։

20 Նույն տեղում։

21 Ն. Բերանեշվիլի, «Վավերագրեր Վրաստանի պալատական պատմություն, ժողովրդական հարաբերություններ (Ժն—ԺԸ դ. դ.)», Ա, Թբիլիսի, 1940, էջ 1337 (վրացերեն)։

22 Յառնե Լորբիփաճին, «Հիշված գիրքը, հիշված տեղերը»։

14 Սրանցից վերջինները առաջացած են այս կամ այն հողամասերը, գյուղացիներով հանդերձ, այս կամ այն կալվածատիրոջ (վրաց իշխան Մուխրանելիին, հայ գրամատեր Միրզոլանին և այլն) անցնելու կապակցությամբ, իսկ «Խատիս-Թելեթի»-ից առաջացած է «Խատիսյան» (Խատիսով) ազգանունը։

15 Լ. Մելիքսեթ-Րեկ, «Հայկական հնությունները Թբիլիսիի մոտիկ շրջակայքում. Տափնարաթ-Թելեթ-Մավկիսի, «Վրաստանի պետական թանգարանի Տեղեկագիր», Ա, Թբիլիսի, 1922, էջ 93. Նույնի «Հնագիտական ուղեվորություն դեպի դրսի Կախեթը և Ճերեմիի ձորը», «Սախալսո սաքմե» օրաթերթ, 1920 թ. 14 հոկտեմբեր, № 951 (երկուսն էլ վրացերեն)։ Հմտ. Նույնի «Մցխեթայի Մայր Տաճարը», «Եղեմիածին», 1957 թ., № 7—8, էջ 47—51։

1809 թվականի 30 դեկտեմբերի մի վավերագրում հիշված են Թելեթի հասույթները²³:

Առանձնապես հետաքրքրական են վավերագրերն ու հմայիլները (որոնցից վերջինները վրացերեն «ավգարոգի» են կոչվում), ուր Տելեթի Ս. Գևորգը հիշված է Վրաստանի Ս. Գևորգ ուխտեղիների շարքում, որոնց ընդհանուր թիվն է 363:

Այդպիսիներից են՝

ա. 1700—1724 թվականների վավերագրեր, ուր հիշատակված են, ի միջի այլոց, Գորիսավարի, Բոճոռնի, Թելեթի, Մոզնի Ս. Գևորգները²⁴:

բ. 1724 թվականի վավերագիրը (շնորհված Դավիթ-Գարեբաշյի «բազմալեռանց» մայրավանքին, ուր նույնպես հիշված են, ի միջի այլոց, Գորիսավարի, Ատոցի, Թելեթի, Մոզնի Ս. Գևորգները²⁵:

գ. ԺԹ դարի սկզբների մի վավերագիր, որի մեջ ևս հիշված են, ի միջի այլոց, Վրաստանի, Բեթղեհեմի, Վանքի, Թելեթի Ս. Գևորգները²⁶:

դ. Նույն դարերից մի հմայիլ, որի մեջ «Թելեթի Ս. Գևորգը» հիշված է «Գողգոթինի Ս. Գևորգի» կողքին²⁷, որը Քուլթախի մոտ գտնվող վայրի անունն է, ուսերեն նույնիսկ «Գողգան»-ի վերածված, հետևապես ոչ թե Մոզնի (Մոզնի) աղավաղումը, ինչպես մենք սխալմամբ ենթադրել էինք 1935 թվականին²⁸:

եվ այլն:

²³ Ն. Բեթանիշվիլի, «Նյութեր Վրաստանի տնտեսական պատմության համար, Ուլ Ֆեոդալական շրջան», Բ. Թբիլիսի, 1953, էջ 189 (վրացերեն):

²⁴ Ն. Բեթանիշվիլի, «Նյութեր Վրաստանի տնտեսական պատմության համար», Գ. Թբիլիսի, 1955, էջ 156 (վրացերեն):

²⁵ Ս. Կախաբաձե, «Պատմական վավերագրեր», պրակ Ե: Թբիլիսի, 1913, էջ 36 (վրացերեն):

²⁶ «Ցուցակ վրացերեն ձեռագրերի Վրաստանի պետական թանգարանի», Զ. Թբիլիսի, 1953, էջ 266 (վրացերեն):

²⁷ Ա. Խախաբաձե, «Ուղղագրեր վրաց գրականության պատմության», Ա. Մոսկվա, 1895, էջ 129 (ռուսերեն):

²⁸ «Մայր-Նովայի հայերեն խաղերի լրիվ ժողովածուն, Թարգմանված տարբերակներով, առաջադրանքներով, ծանոթագրություններով և բառարան-ցանկերով հանդերձ», ի ձեռն Լ. Մելիքսեթ-Քեյի, Թբիլիսի պետական համալսարանի հրատարակչություն, Թբիլիսի, 1935, էջ 34 (վրացերեն): Հմտ. նաև է. Թաղաշվիլի, «Նյութեր Վրաստանի պատմության համար», Թբիլիսի, 1895, էջ 14 (ռուսերեն): Օգտվելով աւերից, պարտք ենք համարում նշել, որ այս հանգամանքի վրա մեր ուղղորդվածը հրավերից վրաց հանգուցյալ կաթողիկոս Կալիստոստը (1932—1952) մեզ հասցեագրված 1936 թվականի 6 ապրիլի թվակիր մասնավոր մի նամակով:

Թելեթի անունը բազմիցս հիշվում է նաև վրացական պատմական և պատմա-աշխարհագրական գրականության մեջ:

Այսպես, օրինակ, ԺԼ դարի առաջին կեսի պատմիչ Բերի էգնատաշվիլին իր «Նոր Քարթլիս-ցխովրեբա» (=«Նոր վրաց տարեգրություն») կոչված երկում, որը գրված է 1716—1724 թվականների ընթացքում, հիշատակում է, որ Սիմոն Ա թագավորի (1558—1600) և Դոմենտի Բ կաթողիկոսի (1599—1603) օրոք պարսիկներն ավերեցին «Թելեթները» («Թելեթեր») ²⁹:

Նույն այդ երկում հիշված են նաև «Թելեթի սարը» ³⁰ և «Թելեթի ձորակը» ³¹:

Մանոթանալով այս տվյալներին, հայ ընթերցողն ականազանց հիշիչ Վազարոս Աղայանի «Արուսյուն և Մանվել» վեպի (1866) համապատասխան հատվածը, ուր նկարագրված է խաչնցի Արուսյունի և նրա ուղեկից «տեր-հոր» ճանապարհորդությունը Բոլնիս-Նախի-ձեղից դեպի Թիֆլիս, նրանց մոտենալով Թիֆլիսին «Թելեթի սարի ստորոտով», ապա նրանց բարձրանալու սարի գլուխը (այսինքն Շահնաբադը—Լ. Մ.—Բ.), որտեղից նրանց աչքին երևաց «քաղաքը»: Այսպիսով, ըստ վերոհիշյալ վեպի, Թելեթի սարը բաժանում է Թիֆլիսը Թելեթից ³²:

ԺԼ դարի առաջին կեսի վրաց ականավոր պատմաբան, աշխարհագիր և բարոնազգեստ արքայազն Վախուշտի Բագրատիոնին իր «Վրաստանի աշխարհագրություն» նշանակալից գործում (1745 թ.) նշում է, որ Կոմիս դուղից դեպի արևելք գտնվում են «Թելեթները» (Թելեթեր) և [այնտեղ] հիկեղեցի [հանուն] Սուրբ Գևորգի, սբանյեւագործ» ³³:

Իսկ ԺԼ—Ի դարերի գրող Զ. Մթածմին-դելիի (=Ջաբրիա Ճիճինաձեի) կուհումով, մինչ Աղա-Մահմադ-խանի կողմից Թբիլիսիի ավերումը 1795 թվականի սեպտեմբերին, Թելեթի բնակիչներն եղել են վրացիներ, որոնք այստեղից գաղթել են և իբր թե նրանց տեղը Հերակլ Բ արքան բնակեցրել է հայի-

²⁹ Էգնատաշվիլի Բերի, «Նոր Քարթլիս-ցխովրեբա ԺԼ դարի սկզբների», Իվ. Ջավախիշվիլու խմբագրությամբ, Թբիլիսի, 1940, էջ 82 = «Քարթլիս-ցխովրեբա», Բ. Ա. Ղաուխիշվիլու խմբագրությամբ, Թբիլիսի, 1959, էջ 367 (կրկուն էլ վրացերեն):

³⁰ Էգնատաշվիլի, էջ 61 = «Քարթլիս-ցխովրեբա», Բ, էջ 356, 494:

³¹ Էգնատաշվիլի, նույն տեղում = «Քարթլիս-ցխովրեբա», Բ, նույն տեղում:

³² Հմտ. նաև «Տեսածս և լսածս» (ճամբորդի նոթեր), «Եվրիա», 1881 թ., № 12, էջ 112—126 (վրացերեն):

³³ Վախուշտի, «Վրաստանի աշխարհագրություն», Թբիլիսի, 1941, էջ 48 (վրացերեն):

րիւն³⁴, որոնք հետադադում վրացի են դարձել³⁵,



Կախեթի ինչպես հայ, նույնպես և, առանձնապես, վրաց ազգաբնակչության աչքում ամենալայն ժողովրդականություն էր վայելում Թեմիթը, այն էլ ոչ թե հենց Կախեթի հինավուրց մայրաքաղաք Ճերեմիի Թեմիթը (որը, բնականաբար, ավելի ժողովրդականություն վայելած պիտի լիներ), այլ Թբիլիսիին առընթեր Թեմիթը:

Սրա պերճախոս վկան վրաց բանահյուսությունն է և նրա մեջ պահպանված ասացվածքները վերջինիս շուրջը:

Այսպես, օրինակ, վիճի ժամանակ, երբ «գրադ են գալիս», սովորաբար ասում են. «Ով կեղծի (սուտ խոսի), նրան Թեմիթը խոտվ կենա»³⁶:

Մյուս կողմից, քեֆի և խնջույքների ժամանակ, երբ հյուրընկալը կամ թամազան աշխատում է հանդիսականներին ավելորդ գինի խմցնել, սպառնում է նրանց ասելով. «Ով որ չի խմի, նրան Թեմիթը մաս-մաս կանի»³⁷:

Որ Թեմիթը լայն ժողովրդականություն էր վայելում վրաց մեջ և, մասնավորապես, Կախեթում, ցայտուն կերպով երևում է վրաց նոր գրականության հիմնադիր, բանաստեղծ, փիլասոփ, հրապարակախոս և հասարակական գործիչ, հալազն մոր ծնունդ Իլիա Ճավաձավաձեի (1837—1907) մոտ 1859—1863 թվականներին միջոցին հորինված «Կացիա-աղամիանի» (=«Մի՛թե մարդ է, աղամորդի») վեպում, հատկապես Թ գլխում³⁸:

Վեպի գլխավոր հերոսները Թաթարիձե ամուսիններն են՝ իշխան Լուարսաբը 40 տարեկան և իշխանուհի Դարեջանը 41 տարեկան, որոնք տառապում են անգավակ լինելու պատճառով: «Քառասուն տարեկան», «բա-

ռասուն և մեկ տարիս», բացականչում են նրանք, և ոչինչ չի օգնում նրանց, ո՛չ Կարապետը և ո՛չ էլ Սողոմոն իմաստունի գիրքը: Բայց և այնպես, նրանք իրենց «հույսը չէին կտրում» գավակ ունենալուց:

Լսելով, որ քաղաքում (Թիֆլիսում) մի գրաբաց վճուկ կա, որը կարող է իմանալ իրենց անգավակ լինելու պատճառը, թեև որդեծնության ժամանակն արդեն անցկացրել էին, նրանք մի մարդ են ուղարկում դեպի քաղաք, հետևել Բաղդադի մի թաղիկնակ, որի վրա գիր էր բաց անում գրաբացը բացակա խնդրատունների համար և որը, ինչ ասե՛կ, կուզի, վերջը նրա մոտ էր մնում: Երեք օրից հետո լրաբերը պատասխան է հասցնում, թե «խաչը ձեզանից խոտվել է, և այն էլ ո՛ր խաչը, Թեմիթին»: Այսպես էր ասել գրաբացը:

Ամուսիններն այս լսելով, միաժամանակ խաչակնքելով, սկսում են վիճել իրար հետ, թե այսպես հեռու տեղ ինչպես դնան ուխտի: Կրկին խաչակնքելով և «մեղա տալով», Լուարսաբը առաջարկում է գնալ մերձակա Ղվարելի գյուղի վերևում գտնվող Նեկրեսիի Աստվածածի՛նը: Բայց Դարեջանը հակառակվում է և առարկում ասելով. «Թեմիթի խաչը կվիրավորվի, կասի թե ես ապսպրեցի, որ ինձ մոտ գան, իսկ նրանք այնտեղ դնացին»: Համաձայնվելով կնոջ հետ, Լուարսաբը զիջում է նրան և նրանք երկուսով որոշում են պատրաստություն տեսնել գնալու դեպի Թեմիթ: «Օ՛հ, մի՛ բարկանար, ո՛վ Թեմիթի խաչ, փառք անունիդ, կգամ, կգամ և կփառաբանեմ անունդ» ասելով, ամուսինները հավատում են գրաբացի խոսքին:

Սալապան Թեղոյին լծել են տալիս սալը, մի կարպետ են ծածկել տալիս գլխին, մի լավ ոշխար կապում սալի պոչին և Աստուծո անունը տալով ճանապարհ են ընկնում քաղաքի մեծ ուղիով: Սալի մեջ նստում են Դարեջանն ու նրա աղախինը: Մի ծառա և Լուարսաբը իր որձ ձիու վրա հետևում են սալին ծանրաբալլ: Լուարսաբը զինված է, մեջքին ունի թուր, հետևել լեզգու խանչալ և մի ատրճանակ:

Նրանց ճանապարհորդությունը մինչև Թեմիթ տևում է ավելի քան չորս օր: Հինգերորդ օրը բարձրանում են ուխտատեղիի վայրը, համբուրում և հենց հետևյալ օրը ճանապարհ են ընկնում դեպի տուն:

Մի այսպիսի ուխտագնացություն Կախեթի Միրզասանի գյուղից դեպի Թեմիթ արձանագրված է վրաց մամուլում 1883 թվականի ներքո»³⁹:

³⁹ Թղթակցություն Թեմիթից, «Դրոկրա», 1883 թ., 31 մայիսի, № 101, էջ 2:

³⁴ Ջ. Մրաժմիճեյի, «Թեմիթը հայերի ձեռին», «Դրոկրա», 1878 թ., 1 հոկտեմբերի, № 198, էջ 2—3 (վրացերեն):

³⁵ Հմմտ. «Մժգեմսի», 1887 թ., № 23, էջ 5—6 (վրացերեն):

³⁶ Լ. Մեյիսեր-Քեկ, «Ս. Գեորգի երկերը», «Ռուսական Աշխարհագրական բնկերության Կովկասյան բաժանմունքի Տեղեկագիր», ԻԴ, № 2, Թիֆլիս, 1916, էջ 227—228 (ռուսերեն), եույնի «Հայկական հնություններ Թիֆլիսի մոտիկ շրջակայքում», «Վրաստանի պետական թանգարանի Տեղեկագիր», Ա, Թբիլիսի, 1922, էջ 94 (վրացերեն):

³⁷ Նույն տեղում (թե՛ ուսերեն և թե՛ վրացերեն):

³⁸ Տե՛ս վեպի հայերեն թարգմանությունը Տ. Փիրույանի՝ «Մորձ» ամսագրում, 1891 թ., № 6, էջ 715—720:



Անկախ վրաց պատմագրություն-բանահյուսությունից, Թեև թի անունը հաճախ է հղումվում հայ պատմագրության և բանահյուսության մեջ, ուր, սակայն, այս պատմական վայրը հանդես է գալիս գերազանցապես իբրև բնֆի և զվարճալիքի տեղ՝ կապված ժողովրդական հավատալիքների, նախապաշարմունքների, սեռտիպապաշտության, կախարհությունների և նման սովորույթների հետ, որոնք այժմ, իհարկե, համարյա չքացել են և հետզհետե անհետանում են։ Բայց կարևորն այն է, որ գրեթե բոլոր չափածոները Թեև թի հիշատակությամբ հասել են մեզ թրիլիսի վաղեմի (Քարափի թաղի) բարբառով, հետևապես արժեքավոր նյութ են մատակարարում այդ բարբառը հետազոտողների համար (որոնց տրամագրության տակ վաղուց կան Սայաթ-Նովայի, Շամշի-Մելքոյի, Գաբրիել Սունդուկյանի և այլոց ստեղծագործությունները)։

Թեև թի հարևան Շահնաբադի (Շավնարադի) հետ միասին հայ գրականության մեջ առաջին անգամ հիշատակված է Աղա-Մահ-մադ-խանի կողմից 1795 թվականի սեպտեմբերին Թրիլիսի ավերման կապակցությամբ ժամանակակցի վկայությամբ, վկայություն, որ օգտագործել է Խ. Աբովյանի դասընկերը՝ Ներսիսյան ղարոցից Գալուստ Շերմազան-Վարդանյանը (1810 մոտ—1891)⁴⁰, «Շահնաբադ»⁴¹ ու Թեև թի քաղաքներն են թուրքերը (իմա՝ պարսիկները—Լ. Մ.—Ր.) ինչպես չիանջվելա (մրջյուն) դեեր էին գալիս», ինքնըստինքյան հասկանալի է, դեպի Կրծանիս—Օրթաճալա—Խարփուխ (Սելդաբադ) արվարձանները, որտեղից պիտի մուտք գործեին Թրիլիսի։

40 Գալուստ Վարդանյան, «Նյութեր աղգային պատմության, Երևելի հայկազունք ի Պարսկաստան», Ռուսում, 1890, էջ 68։

41 «Շահնաբադ» նշանակում է շահի նստատեղի՝ շահնաբադ, շահինաբադ, Ալսպես են կոչվել Թեև թի կից արածայր բլուրը և այնտեղ կառուցված եկեղեցին այն առթիվ, որ այստեղ էր կանգ առնում արեւելքից կամ հարավից Թրիլիսի դեմ եկող թշնամի հրդեհակառնողը պարսից շահի հրամանատարությամբ։ Հեռվից դիտելով Թրիլիսին, այստեղ էր Շահը կշռադատում իր գործելակերպի հետագա ընթացքը և ներդրումը դեպի քաղաք։ Այս տեղանունը կազմված է Աբասարադ, Սարդարաբադ, Աշխաբադ, Սելդաբադ և այլ անունների նմանությամբ, սակայն հետագայում վրացիների մոտ ազավաղվել է ու դարձել «Շավնաբադ», կամ, ավելի ճիշտն ասած, իմաստաբանված է իբրև «սև յափնջի», որը կատարյալ անհիշեթու է։ Հմմտ. Նաև Շավնաբադ լեռան անունը Ջավախքում, Տրիստուրի լճից դեպի արևելք։

Հետևելով Սայաթ-Նովայի օրինակին, որն առնվազն երկու բանաստեղծություն էր նվիրել պատմական վայրերին (մեկը, հայերեն, Թրիլիսի Մոզնու Ս. Գևորգ եկեղեցուն նրա 1751 թվականի վերանորոգման առթիվ, մյուսը՝ քաղաքի վրա, «Մշո Սուլթան Սուրբ Կարապետ թարգման», անթվական), վերջինիս հետևորդ Շամշի-Մելքուն ևս ԺԹ դարի սկզբներին մի սրտառու բանաստեղծություն է նվիրում Թեև թի, ուր, մի կողմից, տալիս է նրա սքանչելի բնության նկարագիրը, և մյուս կողմից, հաղորդում աղգադրական բնույթի սովորներ Թեև թի տոնակատարության մասին։

Շամշի-Մելքոյի բանաստեղծությունը, որի լրիվ տեքստը տալիս ենք սույն հոդվածի վերջում, սկսվում է հետևյալ նախերգանքով.

«Ալալի բաշտան քիզ գովիմ,
իծում բաղ ու բաղաղ, Թեև թի».

Սելդաբադ գովելի,

աճուշ է բուլաղդ, Թեև թի»:

Ապա բանաստեղծը մի առ մի հիշատակում է Թեև թի հաճախորդներին՝

«Շատ համբար ու ասնաֆ»,

«վուրն վրացի, բուրֆ ու հայն»:

Ընդ մինչ, բանաստեղծը բառեր չի խնայում նկարագրելու հանդիսականների շքեթը Թրիլիսից դեպի Թեև թի «Համարացումի չորեքշաբթին» և տոնակատարությունը հանդերձ բոլոր մանրամասնություններով (նախապաշարմունքներ, սնոտիպաշտություն և այլն)⁴²:

Ի դեպ, հատուկ ուշադրության արժանի է նաև Մանվել վարդապետ Շահինյան Կյումուշխանենցի հուշերում հիշատակված այն միաստը, թե ինչպես Հովհաննես արքեպիսկոպոս Կարբեցին, երբ ընտրվեց և հաստատվեց կաթողիկոս, «հրամայեաղ պատրաստել... ձի մի, որ ընդ հանդիսին զնասցուր ընդ նմա մինչ ի Թեև թի Սուրբ Գեորգ վանքին», ուր նա հանձնեց Մանվելին իր հաստատման մասին հրամանագիրը՝ 1831 թվականի 6 սեպտեմբերի թվահամարով⁴³:



ԺԹ դարի երկրորդ կեսից Թեև թի նորից հանդես է գալիս հայ ղեղարկեստական գրականության մեջ Գևորգ Տեր-Աղեքսանդրյանի (1860), Բաֆթու (1871) և Գևորգ Բաշինջաղյանի (1911) երկերում։

42 Գ. Ալվերդյան, «Հայ աշուղներ», Բ, Թրիլիսի, 1903, էջ 490. Լ. Մելիքե-Բեկ, Շամշի-Մելքուն, Երևան, 1958, էջ 67—68.

43 Գյուտու ավագ Լաւաճա Աղանյան, «Դիվան հայոց պատմության», ԺԲ, Թրիլիսի, 1917, էջ 158 (Մանվել Կյումուշխանենցի, Ա.)

Գ. Տեր-Աղեքսանդրյանի գրչին է պատկանում հումորիստական-գաղափարական ոգով և Թիֆլիսի բարբառով գրված էսքիզը՝ «Ուխտագնացություն ի Թելեթ»⁴⁴:

Բաֆֆին, 1871 թվականին գրված իր մի քանի երկերում, որոնք են «Ջահրումար», «Կտակ» և «Թիֆլիսեցու հիշողություններից», հիշում է Թելեթի անունը զանազան առիթներով:

«Ջահրումար»⁴⁵ վեպում Ճանճուր Իվանիչի կինը՝ Բարբարեն, ներկայացված է իբրև մի անձնավորություն, որը «բոլորիկ ոտքով [Թիֆլիսից] մինչև Թելեթ համբուրելու էր գնում»:

Նույն «Ջահրումար»-ի հավելվածում: «Կտակ» գաղափարական բանաստեղծության մեջ, մի քանի անգամ հիշված է Թելեթի անունը:

Այսպես, օրինակ, «Կտակ»-ի գլխավոր գործող անձը՝ կտակարար Թոխմախենց Ջաքարը երգվում է մի շարք սրբավայրերի և, ի միջի այլոց, Թելեթի անունով:

ա

Ձիգ յիս օրքում իմ տալի,
Սուրփ Մոզին⁴⁶, Սուրփ Թելեթ,
Սուրփ Ջիգրաշին⁴⁷ գորավուր,
Մեկ էլ Սուրփ Շանեբաբին⁴⁸:
(Գլուխ Բ, տուն 2)

բ

«Թե վուր Թելեթ, Խուբերա»⁴⁹
Ձիւր Բուվաթով ուլա կերթաւ,
Վերացեվար սրփեւուն
Ձիւր աղոթքներ կարթաւ:
(Գլուխ Գ, տուն 11)

գ

Ձիգ, գերադվա⁵⁰, մէ բան էլ
Միտըս էրի Սուրփ Թելեթ,
Թե ուզում իք փաղ դաղիլ,
Պիտի ծախի դալ⁵¹ բիլեր:
(Գլուխ Դ, տուն 6)

44 «Կուսակ Լայոց աշխարհի», 1860 թ., № 11, էջ 898—922:

45 Այսինքն՝ օձի թույն:

46 Եկեղեցի Թիֆլիսում, վերանորոգված 1751 թվականին, որին նվիրում է իր խաղերից մեկը Սայաթ-Նովան:

47 Նույնպես եկեղեցի Թիֆլիսում, ուր պաշտոնավարում էր Սայաթ-Նովանի թոռը՝ Տեր Մովսես ավագ բաշանա Սայաթյանը (տե՛ս մեր հոդվածը «Էջմիածին» ամսագրում, 1960 թ., Ա թ., էջ 29—33):

48 Տե՛ս նույն հոդվածի 41-րդ ծանոթագրությունը:

49 Ուղիղ՝ Ղվթաբա, որը վանք է Անտոն Միայնակյացի (մարտոմզովի) անվան, Թիֆլիսից դեպի Հյուսիս-արևելք, Նորիո գյուղի մոտ:

50 Այսինքն՝ կաղաչում:

51 Այսինքն՝ կեղծ, շինծու:

«Թիֆլիսեցու հիշողություններից» բանաստեղծության մեջ, ուր հակադրվում են «հին» և «նոր» Թիֆլիսին, Թիֆլիսեցի բաղաբացին տրտնջում է այն առթիվ, որ

«Վառ աղաթներ ենք բերավ
Միւր փաղկումը եվրոպեյն,
Քեփն ու սուփրեն դիփ կորավ,
Փրչացավ էսղանցորեն»⁵²:

(Տուն Ա)

Այա նույն բաղաբացին սրտի կսկիծով հիշում է վաղեմի կյանքը և ախ բաշում ասելով:

«Ա՛խ, բո Քաբոյի գուռնի
Գիդի՛ս ձե՛նն ո՛ւր է էրթում.
Սոլոակում⁵³ կու լըսերի
Յիփ նա կոծեր Թելեթում»:

(Տուն ԺԳ)

Մեծանուն հայ նկարիչ և գրող Գևորգ Բաշինջադյանն ևս իր «Մի էջ իմ հուշատետրից» գրվածքում (1911 թ.) հիշում է այն պահ, երբ ինքը իր ծննդավայր Սղնախ բաղաբաց (Կախեթում) պատրաստվում էր ուղևորվել Թիֆլիս՝ ուսում ստանալու համար, նրան տեղացիներն այլևայլ հանձնարարություններ են տալիս և, ի միջի այլոց, «հարևան պառավ Մարիամը արագաբալլ մոտեցավ ու մի զույգ ղեղին մեղրամոմ ձեռքիս դնելով, — ասում է նկարիչը, — խոսք առավ ինձանից, մինչև անգամ երդվեցրեց, որ Թելեթի Սուրբ Գևորգ եկեղեցու բնմի վրա վառեմ»⁵⁴:

Թելեթի, իբրև պատմական հուշարձանի, հիմնադրման հարցը, իհարկե, չի լուծվում այն նյութերով, որոնք մենք վերև քննեցինք և որոնք ժեղարից այն կողմը, այսինքն ժամանակի խորքերը չեն անցնում: Մինչդեռ Թելեթում առկա մի շարք արձանագրություններ մեծ չափով նպաստում են հարցի լուսաբանմանը:


Մեր ուշադրության կենտրոնում է Թելեթի շորահարկանի զանգակատունը (տե՛ս նկար 1)՝ կառուցված 1832 թվականին, որն ընդգրկել է իր մեջ հին շենքից մնացած ստորին հարկը և, բացի դրանից, Թելեթի մի շարք վիմագրությունները տարբեր ժամանակներից:

Այստեղ աչքի է ընկնում առաջին հարկի հարավային կամարի արևմտյան քիվի (կառնիդի) մեծ բարի վրա փորագրված երկտողա-

52 Այսինքն՝ այս աշխարհը:

53 Թիֆլիսի թաղամասերից մեկը:

54 Գ. Բաշինջադյան, «Էսքիզներ», Թիֆլիս, 1913, էջ 183—նույնի «Ճանապարհորդական նոթեր, էսքիզներ, ֆելիետոններ, հոդվածներ», Երևան, 1957, էջ 189:



Նկար 1. ԹԵՆՈՐԻՍ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆԸ

նի հայերեն արձանագրությունը, որը թեև թերի, է սակայն հնարավոր է վերծանել⁵⁵ (տե՛ս նկար 2):

«[Շնորհալ սմեհակարողի]ն Ա[ստուծոյ] Յ[ա]սմաթ Ուտայ, Սարգիս Ուտայ [և] Դրիգորս շինեցաք գեկեղեցիս (բնագրում՝ գեկեղեցին— Լ. Մ.-Բ.). [Թուին] Ք[րիստոս] յս[ի] Ռթ»:

Ինչպես երևում է, արձանագրությունը փորագրված է 1002 թվականին:

Արձանագրության մեջ ամենից կարևորն այն է, որ բացի Դրիգորից, հիշատակված են նաև «Ուտայ» հորեղբորն⁵⁶ կրող երկու ան-

⁵⁵ Լ. Մելիքսեթ-Քեկ, «Հայկական հնությունները Թիֆլիսի մոտիկ շրջակայքում», հիշյալ հրատարակությունը, էջ 97—98. նույնի «Ուտիացոց պատմությունից. (Ուտիկա-Արմենիական)», «Թիֆլիսի պետական համալսարանի Աշխատությունները», ԻԳ, Թիֆլիսի, 1942, էջ 39—42 (նոսերեն), լուսանկարով 39-րդ էջում:

⁵⁶ Հմմտ. Ուտայ կամ Ութայ, նաև Մար-Ութայ, այսինքն «Հայր Ութայ, Մարութա եպիսկոպոսի (ն դար) վկայաբանության մեջ (Միաբան, «Արարատ», 1893 թ., էջ 933), Մարութա եպիսկոպոս Մայաֆարկինի, այսինքն նիքիդերտի (Ժ. Շաքո, «Կեղծ-Դիոնեսիոսի ժամանակագրությունը», Լոսան, 1949, էջ 141, 143, լատիներեն):

ձինք, որոնցից մեկն է Յասմաթը և մյուսը Սարգիսը: Սրանք, հավանական է, Թեոֆիլ նախնական եկեղեցու հիմնադիրները լինեն 1002 թվականին, այսինքն այն ժամանակ, երբ, մի կողմից, Շիրակի Բագրատունյաց մայրաքաղաք Անիում ավարտված էր Կատարմիդե թագուհու ձեռնարկած Մայր Եկեղեցին (1001 թ.), իսկ մյուս կողմից, Ափխազ-Քարթվեկական Բագրատունյանների մայրաքաղաք Քութայիսում ավարտվում էր Բագրատ Գ արքայի կողմից կառուցվող կաթողիկե տաճարը (1003 թ.): Հակառակ դեպքում, պետք է ենթադրել, որ քարը բերված է մի որևէ հեռավոր ուխտատեղիից, գուցե և հենց Ուտիքից, այսինքն Ուտիացոց երկրից:

Եթե ենթադրենք, որ Յասմաթն ու Սարգիսը իսկապես ուտիացիներ են (ուղեր), այսինքն հայադավան ուտիացիներ, որոնք, իհարկե, տեղյակ պիտի լինեին հայերենին, քարն ևս կարող էր բերված լինել Ուտիացոց երկրի մի որևէ հայադավան մենաստանից⁵⁷, որպիսիք էին «Ճալեթ», «Եղիշ առաքյալ» և «Գիս» կոչված վանքերը⁵⁸:



Թեոֆիլ հիմնադրման խնդրի շուրջը հետաքրքրական հեռանկար է բացվում մեծագույն հայ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն Տանն Սիսական»-ի մեջ հիշված մի շարք աշխարհագրական կետերի տեղագրության ճշտման շնորհիվ:

Դա այն նյութն է, որ ամփոփված է վրաց Գիորգի Գ արքայի (1156—1184) դեմ 1177—1178 թվականներին Օրբելյանի կողմից կազմակերպված դավադրական ապրտամբության և ապա նրանց պարտվելու ու հալածանքի ենթարկվելու պատումի մեջ, որը

⁵⁷ Լ. Մելիքսեթ-Քեկ, «Ուտիացոց պատմությունից», էջ 41:


⁵⁸ Հովհաննես եպիսկոպոս Շանխարունյաց, «Ստորագրություն կաթողիկե էջմիածնի և հինգ գառառաց Այրարատայ», Բ, էջմիածին, 1842, էջ 379—380. Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանց, «Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան», Բ, էջ 376—379. Մակար եպիսկոպոս Բախուդադյան, «Աղվանից երկրի և դրացիք», Թիֆլիս, 1893, էջ 249—256. Դազարու Բանան Հովսեփյան, «Ակնարկներ ուտիացի և մահադական հայերի մասին», Թիֆլիս, 1904, էջ 41—47. Կ. Կոստանյան, «Վիմական տարեգիր», ՍՊԲ, 1913, էջ 171, 174, 176 և այլն: Այստեղ տեղին կլինեի նշել, որ Գիսը վրացերեն կոչվում է Գիշի, որով այն կապվում է [Եղիշ անձնանվան հետ, իսկ Ճալեթ և Թեոֆիլ տեղանունների իրար մոտ լինելը ակնհայտ է:

դրի է առել Օրբելյանը⁵⁹։ Իսկ մինչ Օրբելյանը այն մանրամասն արձանագրված է եղել ղեկավարի ժամանակակից, Հաղբատի վանքի միաբան Դավիթ վարդապետ Քոբայրեցու մի ընդարձակ «Հիշատակարան»-ի մեջ⁶⁰։

Աշխարհագրական կետերը, որոնց շուրջը տեղի էին ունեցել 1177—1178 թվականների ղեկավարը, հիշյալ պատմիչների մոտ հիշատակված են այսպես. «Ագարակ ղղեակ»՝ ըստ Դավիթ Քոբայրեցու⁶¹, կամ «Ագարակն կոչեցեալ դարպասի» = «Ագարակն դարպաս»՝ ըստ Ստեփանոս Օրբելյանի⁶², ուր նստած էր ապստամբության ղեկավար Օրբելյան Սմբատի որդի Իվանեն իր եղբայրներով, որդիներ-

պրոֆ. Ն. Գ. Բերձենիշվիլու կուսման⁶⁵, ԺԲ—ԺԳ դարերում ընդհանուր առմամբ «Ագարակ» է կոչվել Թբիլիսիի մոտիկ շրջակայքը (Շինդիսի, Տաբաթմեալ, Կոջորի գյուղերը), որը ծառայել է իբրև ամառանոց վրաց արքայական տան անդամների ու մեծամեծների համար։ Մասնավորապես «դարպաս» — «դարպաս»-ը Կոջորիի ամառանային ապարանքները պիտի լինեին։

Սրա կապակցությամբ որոշվում է և «Սախատե»-ի տեղագրությունը, որն, ըստ Ն. Բերձենիշվիլու, նույն «Նատիս Թելեթի»-ն պիտի լինի, այսինքն Թելեթի Ս. Գևորգ ուխտատեղին։



Նկար 2. Թելեթի 1002 թվականի ՀԱՅԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

րով և յուրայիններով հանդերձ։ Եվ սրանց մոտ էին գալիս «մեծամեծ ղեղեկուղացն, գայր և Դեմնայն», որին Օրբելյանն ուզում էին արքայական գահ բարձրացնել. մինչդեռ Գիորգի Գ թագավորի մասին ասված է, որ նա կայ նստեալ ի Սախատե⁶³ սակաւ արամբք»⁶⁴։

Ագարակը Լուսվա բերդի մոտերքում գտնվող ավանի անունն է։ Սակայն, ըստ

Ամփոփելով Ստեփանոս Օրբելյանի հաղորդած տեղեկությունները Օրբելյանի ապստամբության մասին, Ն. Բերձենիշվիլին ներկայացնում է ղեկավարի ու անցքերի հաղորդականությունը հետևյալ կերպով (մեջբերումի մեջ ընդգծումները Ն. Բերձենիշվիլունն են — Լ. Մ.—Բ.)։

«Թագավորը գտնվում էր Սախատեում (ի տեղի դարպասի), Օրբելյանը նստած էին վերին Տաբաթմեալում (Կոջորիում կամ Ագարակ-դարպասում)։ Իվանեն հարձակվեց Սախատեի վրա, թագավորը փակվեց Թբիլիսիում, Իվանեն գրավեց Սախատեն, թագավորն ուժեղացավ, վերադարձրեց թե՛ Սախատեն և թե՛ Իվանեի ապարանքը (դարպասը) և ամրոցը (խիսար)։ Եվ այսպիսի պատկերի իրավացիության վկան է, թվում է, Սախատե անունը։ Անտարակոյս, այն կապված է ուխտատեղիի հետ. այս վայրը, ուր թագավորի պալատն էր գտնվում, կոչվում էր Սախատե։ Այժմ, հիմն հիշենք, որ հենց այս վայրը, «ի տեղի դարպասի», գտնվում է այժմյան Թելեթի ղեկի հյուսիս, նրա շրջակայքում, իսկ այս Թելեթը այժմ հռչակված է իր ուխտատեղիով, ուր ուխտավորները հե-

59 «Պատմություն նահանգին Սիսական արաբալ Ստեփանոսի Օրբելյան արքայականության Սիսանց», Թբիլիսի, 1910, էջ 384. Լ. Մելիքսեթ-Քեյ, «Ստեփանոս Սյունեցու «Օրբելյանի պատմության» վրացական վերսկսան», «Պատմության հեղեղագիր», 2, Թբիլիսի, 1952, էջ 60 (վրացերեն)։

60 Վ. Հակոբյան, «Դավիթ Քոբայրեցու հիշատակարանը», «Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հեղեղագիր», 1952 թ., Ա 3, էջ 119։

61 Նույն տեղում։

62 ՏՆՎ 59-րդ ծանոթագրությունը։

63 «Նատ»-ի բառից, սա նախածանցով և է վերջամասնիկով, որ նշանակում է զարդ, զարդանկար, խաչ, սրբապատկեր, սրբավայր, ուխտատեղի և այլն։ Հմմտ. Հ. Անադյան, «Հայերեն արձատական բառաբան», Գ, էջ 396. Ն. Ման, «Ընտիր երկեր», Ա, էջ 76 (ուսերեն)։

64 «Պատմություն նահանգին Սիսական», էջ 384։

65 Ն. Բերձենիշվիլի, «Հին Թբիլիսիի տեղանուններից (Ագարակի)», «Միմոսիսիլի», Բ, Թբիլիսի, 1951, էջ 37—60 (վրացերեն, ուսերեն ամփոփումով)։

ուսման տարածությունից են դալիս, և այս պատճառով դյուզն ևս հատիս Թեյեթի է կոչվում, մենք ի վիճակի ենք ավելի մեծ համարձակությամբ կռահելու, որ այն վայրը, որի մոտերքում թագավորի դարբասն էր գտնվում, կոչվում էր Սախատե»⁶⁶:

Ընդ սմին, Ն. Բերձենիշվիլին հաշվի է առնում նաև մի այլ ենթադրություն. գուցե «Սախատե» կոչվածը Շահնարադը (Շավնարադը) լինի: Սակայն, մի շարք համոզեցուցիչ փաստերով այս ենթադրությունը փարատելով, նա վերջնականապես գալիս է այն եզրակացություն, որ Օրբելյանի հիշած «Սախատե»-ն հատիս-Թեյեթն է⁶⁷, այսինքն հուշակավոր Թեյեթի Ս. Գևորգ ուխտատեղին:

Հետևապես, եթե ընդունենք Ն. Բերձենիշվիլու միանգամայն տրամաբանական այս կռահումը, անշուշտ պիտի հանգենք և այն եզրակացության, որ 1177—1178 թվականների ապստամբության պահին Թեյեթն իբրև ուխտատեղի ոչ միայն գոյություն ուներ, այլև վայելում էր մեծ հեղինակություն ժողովրդի մեջ:

Այստեղից բխում է մի այլ հետևություն ևս. Թեյեթի նախնական եկեղեցու հիմնադրումը կարող էր տեղի ունենալ 1002 թվականին, ինչպես կարդացվում է նրա հնագույն հայերեն վիմագրության մեջ, այսինքն դեռևս այն ժամանակ, երբ Թբիլիսին իր շրջակայքով և, նրա հետ միասին, Արևելյան Վրաստանի որոշ մասը գտնվում էին արաբական խալիֆատի գերիշխանության տակ, իսկ մասնավորապես Թբիլիսին արաբական ամիրայի նստադեղին էր, մինչև որ Դավիթ Շինոդ արքայի կողմից Թբիլիսիի ազատագրումով 1122 թվականին ամբողջ Վրաստանը կմիանար իր հինավուրց մայրաքաղաքի շուրջը:

Այժմ մեզ մնում է հրապարակել Թեյեթում մեզ հասած հայերեն և վրացերեն վիմագրությունները, որոնք, ինչպես և վերոհիշյալ 1002 թվականի արձանագրությունը, ամփոփված են 1832 թվականին վերակառուցված զանգակատան (տես նկար 1)⁶⁸ պատերի մեջ, թե՛ ներքուստ և թե՛ արտաքուստ⁶⁹:

⁶⁶ Ն. Բերձենիշվիլի, հիշյալ աշխատությունը, էջ 37—60:

⁶⁷ Այստեղ կարևոր է նշել, որ Բոնիսի հայոց ուխտատեղին ևս կոչվում էր «հատիս-սոփեթ», այսինքն հաշի գյուղ:

⁶⁸ Հմմտ. Ռ. Մեյրիկեզ, Վ. Դոլիձե, Թ. Բառնավելի, «Թբիլիսիի շրջակայքը, ճարտարապետական ուղեցույց», Թբիլիսի, 1960, էջ 88—89 և նկարներ 27 ու 28 (սուսերեն):

⁶⁹ Լ. Մելիքսեթ-Քեկ, «Հայկական հուշություններ Թիֆլիսի մոտիկ շրջակայքում», հիշյալ հրատարակությունը, էջ 92—101 (վրացերեն):

Հանդակատան երկրորդ հարկում, արտաքուստ, արևելյան պատի հարավ-արևելյան անկյունում պատի մեջ ամփոփված է մի խաչքար, որի շուրջը կարդացվում է 6 տողանի երկաթագիր հայերեն հետևյալ արձանագրությունը.

«Սուրբ խաչս բարեխաւս է Տէր Յակոբին. քվին Ռճէ»:

Պետք է ենթադրել, որ Տեր Հակոբը, որ հիշված է 1681 թվականի ներքո, եղել է Թեյեթի վանահայր կամ միաբան:

Նորակառույց (1826 թ.) եկեղեցու ներսում նշվում է մի տապանագիր, որը, հավանական է, նախքան եկեղեցու կառուցումը, նույն տեղում է եղել բացօթյա: Սա նույնպես երկաթագիր հայերեն է՝ 6 տողից բաղկացած.

«Այս է տապան Տէր Ներսէսին, որ առ Աստուած փոխեցաւ. քվին Ռճկթ դեկտեմբերի Ին»:

Անտարակույս, այստեղ հիշված Տեր Ներսեսը, որը վախճանվել է 1713 թվականի դեկտեմբերի 25-ին, նույնպես Թեյեթի վանահայր կամ միաբան պիտի լիներ:

Բացի այս տապանագրից, մի ժամանակ հիշյալ եկեղեցու բակում այս ու այն տեղ ցրված էին մի շարք այլ հուշարձաններ, որոնց մեջ հիշվում էին Թեյեթի հանգուցյալ վանահայր վարդապետները, մի դեպքում նույնիսկ ծայրագույն վարդապետի աստիճանով, բոլորն էլ համեմատաբար ավելի ուշ ժամանակներին⁷⁰:

Սակայն վերադառնանք զանգակատան Անվիճելի է, որ Թեյեթի հուշությունների շարքում արվեստի տեսակետից համեմատաբար ամենահետաքրքրականն է բարձրաքանդակը, որն ամփոփված է զանգակատան պատերից մեկում, ուր ներկայացված է Ս. Գևորգը՝ ձի հեծած և նիզակով վիշապին խորտակելու դիրքում (տես նկար 3):

Բարձրաքանդակի ներքևի մասում շրջանակի մեջ փորագրված է հետևյալ երկլեզվյան արձանագրությունը.

ա. հայերենը՝ 4 տող.

70 Նույն տեղում, էջ 99—100: Օգտվելով առիթից, կուղենայինք նշել, որ Թեյեթը ուներ և իր «տիրակալները» հանձնին Մեհրաբյան ազգատոհմի ներկայացուցիչ քահանաների, ի դարի սկզբներին այստեղի վանահայրերն էին հաջորդաբար Դիոնեսիոս վարդապետ Ղամաղյանը և Միքայել վարդապետ Դավթյանը, որոնց փոխարինեց Թիֆլիսի թեմական կոնստանտինյան անդամ Սարգիս ավագ քահանա Երոյանը (հետագայում էշմիածին միաբան Սարգիս եպիսկոպոսը): Վերջինիս մասին Բազումը Այվազյան, Քառանհինգամյակ Սարգիս ավագ քահանա Երոյանի քահանայական, դպրոցական-հասարակական գործունեության, Տիֆլիս, 1920:

«Հիշատակ է երբեմն Յեսայու որդւոյ Ա-
բելի ժառանգ Գէորգին, որ ընծ[այ]եաց ի
դոտն Սրբոյ Գէորգայ զօրավարին, քուին
ԻՄԽԱ»:

բ. վրացերենը՝ 1 տող.

«Շէվծիրէք շվէն խառագ Աբէլա դա շվիլի
Գէուրֆա» («Ընծայեցինք մենք, կոշկակար
Աբելը և [նրա] որդի Գեուրգը»):

Այսպիսով, պարզվում է, որ Ս. Գեորգի
բանդակը նվիրաբերել են Թելեթին էրինենց
նսայու որդի կոշկակար Աբելը և նրա որդի
Գեուրգը (Գէուրքը): Նվիրատվությունը տեղի
է ունեցել 1792 թվականին, այսինքն Աղա-
Մահմադ-խանի արշավանքից 3 տարի առաջ:

Բացի դրանից, արձանագրությունն ար-
ձագանքում է այն իրողությանը, որ Թելեթը
իրոք «սնյրանդա՜»-ի, այսինքն զբոսավայրի,
դեր է կատարել վրաստանի տարացեղ
(վրաց, հայոց և «թուրքեր»-ի) ազգաբնակչու-
թյան գերազանցապես «համբար ու ասնաֆ»
կոչված շերտի աչքում, ինչպես վկայում է
Սալաթ-նովայի հետնորդ բանաստեղծ Շամ-
չի-Մելքոն:

Անուամենայնիվ, շմոռանանք ասել նաև
այն, որ, տալով Թելեթի սուլն բարձրաբան-
դակի լուսանկարը, բնականաբար պիտի հի-
շենք այն վրացերեն վավերագիրը, որ Թելեթի



Նկար 4. ԹԵԼԵԹԻ ՎԱՆՔԻ ԲԱՐՁՐԱԲԱՆԴԱԿ
Ս. ԳԵՎՈՐԳԸ



Նկար 3. ԹԵԼԵԹԻ ԶԱՆԴԱԿԱՏԱՆ
ԲԱՐՁՐԱԲԱՆԴԱԿ Ս. ԳԵՎՈՐԳԸ

Ս. Գեորգը անվանված է անմիջապես վանքի
Ս. Գեորգի կողքին. ուստի և նպատակահար-
մար ենք գտնում կցել մեր հոգվածին և այս
վերջինի լուսանկարը (նկար 4)⁷¹:

Այժմ կանգ առնենք պատմական զանդա-
կատան, այս յուրատեսակ թանգարանի,
մնացած արձանագրությունների վրա:

Սրանցից մեկն է դարձյալ երկնզվյան վի-
մագրությունը չորսհարկանի շենքի առաջին
հարկի հարավային պատում, մի քարի վրա,
որ տրված է մեջբերում Սադմոսից (Խ. 1),
իսկ վերևից նշված է թվականը արաբական
թվանշաններով՝ 1827:

Ահա այդ արձանագրությունը.

ա. հայերենը՝ 5 տող.

Ջեռանի, որ խորնի զաղփատն եւ զտնանկն,
յաւուր շարի փրկէ զնա Տէր»:

71 Վանքի Ս. Գեորգի բարձրաբանդակը հայտնա-
գործվեց հողային աշխատանքների միջոցին Թբիլիսիի
Վանքի եկեղեցու բակում 1909 թվականին և ամփոփ-
վեց տաճարի սյուներից մեկում (Հյուսիսային շարքի
միջին մույթում, երեսը դեպի արևմուտք), ապա 1937
թվականին տեղափոխվեց Մեղրայի Ս. Գեորգ եկեղե-
ցին, որ և ամփոփված է այժմ հարավային պատի
մեջ, երեսը դեպի հյուսիս:

բ. վրացիները (բովանդակությամբ նույնը)՝ 6 տող.

«Ննետար արս, բովանդակ գովիսմա հղոս գլխակիսա դա դավրդովիլիսա. դղեսա բո-րոտսա իխսնաս իգի ուփալման»⁷²:

Վերջապես, նույն զանգակատուն-թանգարանի առաջին հարկում, հարավային պատում, մարմարյա մի փոքրիկ քարի վրա փորագրված է ընդարձակ հայերեն մի արձանագրություն բոլորագիր տառերով՝ 9 տող, որը վերաբերում է զանգակատան կառուցման.

«Զանգակատունս այս Սուրբ Գեորգ վանացս Թլէլթի հանդերձ նորակերտ հաստատութեամբ աշտարակիս կանգնեցաւ արդեամբ բարեպաշտ հասարակութեան և մանաւանդ ազնիւ Եագօր Արտեմիշի Զարեանց ի ձեռն աշխատասիրութեան Տէր Գեորգ աագ քահանայի Մեհրաբեանց՝ յամի Տեառն 1832-ին»:

Այսպիսով, Թելեթի շորահարկանի զանգակատուն-աշտարակը, «վալիլացեալ շքեղ կաթողիկէի», ինչպես գրել է Սարգիս արքեպիսկոպոս Զալալյանցը, կառուցված է 1832 թվականին: Սույն թվականին է ավարտված նաև այլ շենքերի (այդ թվում և եկեղեցու) կառուցումը, որ սկսված էր 1826 թվականին:

Կարճ ասած, Թելեթի հուշարձանների պատմությունը կարելի է ամփոփել, եթե չհաշվենք Դ դարի հիշատակությունը, 1002—1832 թվականների շրջանակում:



Մեր սույն տեսությանը կցում ենք Շամշի-Մելքոյի բանաստեղծությունը՝ նվիրված Թելեթին, 4 տուն⁷³.

72 Միանգամայն համապատասխանում է վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ նորերս լույս տեսած համեմատական գիտական բնագրին: Տե՛ս «Սագոմսը հին վրացերեն խմբագրությամբ Ժ—ԺԳ դարերի ձեռագրերի հիման վրա», ի ձեռն Մզեֆալա Շանիձեի [«Հին վրացերեն լեզվի հուշարձաններ», Բ], Թբիլիսի, 1960, էջ 103:

73 Տե՛ս 42-րդ ծանոթագրությունը:

1. Ավալի բաշտան⁷⁴ փիզ գովիմ իծում բաղ ու բաղչաղ, Թելե՛թ. Սեյրանգանդ⁷⁵ գովելի, անուշ է բուլաղդ, Թելե՛թ: Մեռնիմ ֆու օղորմութենին, աշխարհս չիկա ֆու բայն. Դիփունեանք փիզ կու ավտանք՝ վուրն վրացի, քուրֆ ու հայն: Վուր խունկ ու մուս կու բերի, վուր արասին ու շանին: Կարող իս դուն, կու փրկիս չուլիսին ու կաղին, Թելե՛թ:

2. Քու դումն համփուրելու շատ համֆար ու ասնաֆ կուգա. Մեռնիմ ֆու օղորմութենին, շատ աղավնի ու հավ կուգա: Վուր տավար կու բերն, շատ օշխար ու գառ կուգա. Թե վուր դուն հանձ կուլիս, կու կտրին մատաղն, Թելե՛թ:

3. Քաղկի տղերքն մող կուլին, դիփ միանա⁷⁶ քաղով կուգան. Ռանգեռանգ ձիաներով օսկե յարաղեծով կուգան. Մոնթիքն ֆախըր ձեռով շարական ու տաղով կուգան. Համբարցումի չորեքշափին կու կապինք իրդարն⁷⁷, Թելե՛թ:

4. Ասում ին՝ սագով կոսիմ, յիս էս խաղն նագով կոսիմ. Չուրս խանա⁷⁸ քարիփլամեն⁷⁹ էսպես մուխամբագով կոսիմ. Թիֆլիզու Շամշի-Մելքոն համաշա սոյրաբով⁸⁰ կոսիմ: [Սեյրանգանդ գովելի, անուշ է բուլաղդ, Թելե՛թ]:

74 Այսինքն՝ սկզբից, էն դիտից:

75 Այսինքն՝ զրոսափայլ:

76 Այսինքն՝ բոլորը մասին:

77 Այսինքն՝ խոստովանություն, համաձայնություն:

78 Այսինքն՝ տուն, բանաստեղծության տուն:

79 Այսինքն՝ գովերգություն:

80 Այսինքն՝ զրույց:

